«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի հուլիսի 31-ի N 885-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 885-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի հուլիսի 31-ի N 885-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետում նշված միջոցառման՝ «Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը» սյունակում՝ «2020 թ.
4-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2021 թվականի 4-րդ եռամսյակ» բառերով,

2) 2-րդ կետում նշված միջոցառման՝ «Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը» սյունակում՝ «2021 թ.
3-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2022 թ.
4-րդ եռամսյակ» բառերով։